Վերջ չկայ քմահաճ գալարներին: Շոգենաւի պտուտակի ամեն դարձին տեսարանը փոխւում է: Դէմ եկող ամեն մի հրւանդան բերում է իր հետ եւ մի նոր անակընկալ:

Երբեմն նաւակների մի ամբողջ շարք է, որ խմբւել է մանրիկ խորշում ձկնորսի խրճիթի տակ, երբեմն մի գերեզմանոց, որ սարն ի վեր է մագլցում կամ ճգնաւորի լռիկ խուցը, որ գաղտուկ ցած է նայում անտառակի թագուն անկիւնից:

Թէեւ օրը շատ վաղ էր դեռ, բայց մեր շոգենաւի ամբողջ բնակչութիւնը դուրս էր թափւել տախտակամածը, որ զմայլւէ առատօրէն մեր դէմ բացւող տեսարանով ու այդ սար ու ծովի իրար գրկող գոյներով, որոնք աւելի էին գեղեցկացել «ծագող արեւի» ճառագայթների տակ:

Մի առանձին պարզութիւն, փափկութիւն ու իդիլիկ անդորրութիւն է բուրում այդ ո՛չ-բարձր կենսուրախ սարերից, այդ օրօրուն մեղմ ծովից եւ երկնքի ջինջ կապոյտից:

Ո՛չ մի խիստ բեկւող գիծ չի խանգարում նկարի փափուկ ներդաշնակութիւնը, չի գրգռում դիտողի երեւակայութիւնն ու ջիղերը:

Ամեն ինչ կարծես ձգտում էր ճամփորդին էլ ներշնչելու մի խաղաղ ու զւարթ տրամադրութիւն՝ այդ ժպտուն, կանաչ աշխարհը մտնելիս:

Կեանքը հետզհետէ զարթնում էր ծոցում: Ջօնկերը ծալաւոր առագաստները բացած սլանում էին մեր մօտից ու շտապում բաց ծոցը ձկան որսի:

Ճապոնական երկճեղ վերջով նաւակները ճօճւելով լող էին տալիս ամեն ուղղութեամբ: Ծովի կապոյտի վրա որոշակի գծագրւում էր ղեկավարի բնորոշ կերպարանքը, որը կանգնած